Գրանցվե՛ք Այսօր Քվեարկելու համար:

Official Information

Դա արագ է և հեշտ և հնարավոր է անել Ձեր հեռախոսով:

Գրանցումների Վարող/Վարչաշրջանի Քարտուղարը (RR/CC) ունի այն ամենը ինչ Ձեզ անհրաժեշտ է 2026 Ընդհանուր Ընտրություններում Ձեր քվեն տալու համար:

Իմացե՛ք, թե ինչպես կարող եք նախապատրաստվել ընտրություններին և կազմե՛ք քվեարկելու Ձեր ծրագիրը:

Ինչպես գրանցվել քվեարկելու համար՝

Եթե Դուք տեղափոխվել եք վերջերս, քվեարկում եք առաջին անգամ, կամ նորեկ եք ԼԱ Վարչաշրջանում Դուք պետք է գրանցվե՛ք մինչև 2026թ-ի Հոկտեմբերի 19-ը, որպեսզի ստանաք քվեաթերթիկը Ձեր տան փոստային հասցեով:

Քվերակելու համար գրանցվելու ամենապարզ եղանակը PLAN.LAVOTE.GOV այցելելն է:

Եթե բաց եք թողել վերջնաժամկետը, այնուամենայնիվ Դուք կարող եք գրանցվել ցանկացած Ընտրատեղամասում երբ գնաք Ձեր ընտրությունը կատարելու:

Համընդհանուր Ընտրությունների Կարևոր Ամսաթվերը

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1
Քվեաթերթիկների փոստով ուղարկում և քվեատուփերի բացում

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19
Քվեարկողի Գրանցման Վերջնաժամկետ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24
Որոշակի Ընտրատարածքների Բացում

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31
Բոլոր Ընտրատարածքների Բացում

ՆՈՅԵՄԲԵՐԻ 3
Քվեարկելու Վերջին Օր

Official Information

Որո՞նք են իմ քվեարկելու տարբերակները:

ԼԱ Վարչաշրջանի Քարտուղարը RR/CC տրամադրում է ապահով, հարմար տարբերակներ Ձեր ընտրությունը կատարելու համար: Դրանց թվում են՝

1. Քվեատուփ

Ինչու սպասել հերթում, եթե Դուք կարող եք Ձեր քվեն թողնել ավելի քան 400 պաշտոնական Քվեատուփերից մեկում, որոնք տեղակայված են ողջ ԼԱ Վարչաշրջանում: Գտեք Ձեզ ամենամոտ գտնվող Քվեատուփը PLAN.LAVOTE.GOV կայքում:

2. Քվեարկություն փոստով

Քվեարկեք նախապես՝ Ձեր քվեաթերթիկը լրացնելով այն պահին երբ ստանում եք: Քվեաթերթիկները փոստով կուղարկվեն ԼԱ Վարչաշրջանի յուրաքանչյուր գրանցված ընտրողի՝ սկսած Հոկտեմբերի 1-ից: Լրացրեք այն, ստորագրեք վերադարձի ծրարը և անմիջապես ուղարկեք:

3. Այցելեք որևէ Ընտրատարածք սկսած Հոկտեմբերի 24-ից:

ԼԱ Վարչաշրջանի քվեարկողները կարող են իրենց ձայնը տալ ցանկացած Ընտրատարածքում: Գտեք Ձեզ ամենամոտը PLAN.LAVOTE.GOV կայքում և կազմեք քվեարկելու Ձեր ժամանակացույցը մինչև Ընտրության Օրը: Եթե հարցեր ունեք Ընտրատարածքի վերաբեյալ, խնդրում ենք կապ հաստատել (800) 815-2666 հեռախոսահամարով:

Կազմեք Քվեարկելու Ձեր Ծրագիրը հենց Այսօր: